ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԾԱՂԿՈՒՆՔԻ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշապատի համայնքապետարանը հայտարարում է «Ծաղկունքի» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ: ՀՈԱԿ-ը գտնվում է Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրում, Սայաթ-Նովա 3 հասցեում /հեռախոս 06088899 /247/: Տնօրենի աշխատավարձը կազմում է 255. 000 ՀՀ դրամ:

ՀՈԱԿ-ի տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, ՀՈԱԿ-ի կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության եւ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի ՀՀ այն գործունակ չափահաս քաղաքացին որը, ըստ ՀՀ ՏԿԵ նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների, համապատասխանում է «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 19-րդ կետի պահանջներին, այն է՝ ունի նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունք՝ հավաստագիր:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2) ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

4) 65 տարին լրացած քաղաքացիները.

5) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի ՀՀ ՏԿԵ նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.

Մրցույթը կկայանա 2026 թ. դեկտեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի շենքում /ք. Էջմիածին Ս. Մեսրոպ Մաշտոցի 0/՝ հարցազրույցի փուլով:

Դիմող քաղաքացիները Վաղարշապատի համայնքապետարան /ք. Էջմիածին Ս. Մեսրոպ Մաշտոցի 0/ կամ Արմավիրի մարզպետի աշխատակազմ /ք. Արմավիր/ կամ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն անձամբ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փոստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

8) Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճեն:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10-00-ից 17:00-ը /ընդմիջման ժամ 13:00-14:00/: Դիմումների ընդունման վերջնաժամկետն նոյեմբերի 27-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Էջմիածին Ս. Մեսրոպ Մաշտոցի 0, հեռ. 0231-53663-120/ կամ Արմավիրի մարզպետի աշխատակազմ /ք.Արմավիր, Աբովյան փողոց, 71/: